ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ՊԱՏՄԱ-ԻԴԵԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՅԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Է. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Իդեալիզմը օրգանապես անընդունակ է աշխարհայացքային հիմք ծառայելու հասարակական գիտությունների արմատական պրոբլեմների լուծման համար։ Առաջին հերթին դա վերաբերում է այդ գիտությունների հիմնական բովանդակությունը որոշելու և սոցիալական երևույթների էությունը բացահայտելու պրոբլեմին։

Այդ պրոբլեմը թերեյան սֆինքսի նման ծառացավ նոր ժամանակի հասարակագետների առաջ, քանի որ նրա ճիշտ լուծումը միայն կարող էր նախադրյալ հանդիսանալ սոցիալական գիտությունների հետևողականորեն գիտական մեթոդոլոգիայի ստեղծման համար։ Հիրավի, առանց տվյալ պրոբլեմի պարզաբանման անհնար էր հասկանալ հասարակության ծագումը, նրա հետագա զարգացման շարժիչ ուժերն ու օրինաչափությունները։ Մյուս կողմից, գիտությունների ընդհանուր շարքում հասարակական գիտության իսկական ինքնորոշման ուղղությամբ վճռական քայլը կարող էր կատարվել միայն տվյալ պրոբլեմի լուծման շնորհիվ։ Այնինչ իդեալիստական հասարակագիտության զարգացման ամբողջ փորձը ցույց է տալիս, որ նրա ներկայացուցիչները, չնայած բազմաթիվ մասնակի նվաճումներին, լիակատար ֆիասկո կրեցին այս հարցում, որը, վերջին հաշվով, բնորոշում է պատմա-փիլիսոփայական և սոցիոլոգիական կոնցեպցիաների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին նկարագիրը։

Ժամանակակից բուրժուական հասարակագիտության հիմնական արատները, նրանց իմացաբանական նախադրյալների տեսանկյունից բնված, ծագում են հենց այն բանից, որ նա օրգանապես անկարող է թափանցել մարդկային համակեցության առավել էական հարաբերությունների մեջ և դրանով իսկ ստեղծել գիտական սոցիոլոգիական կոնցեպցիա, որն իբրև հայացքների համապատասխան տեսական սիստեմ վերարտադրեր հասարակության գործունեության և զարգացման օրինաչափությունները։

Պնդելով, որ անհնար է պատմա-իդեալիստական դիրքերից լուծել հասարակական գիտության առարկայական առանձնահատկության պրոբլեմը, պարզ է, որ դրանով մենք չենք ուզում ասած լինել, թե իդեալիստական մտածողությունը առհասարակ անընդունակ է հասկանալու սոցիալական երևույթների ինքնատիպությունը։ Նման հայտարարությունը մոտ կլիներ բացահայտ անհեթեթության, քանի որ «պատմության իդեալիստական ըմբռնում» հասկացությունն ինքնին արդեն ցույց է տալիս, որ նրա ներկայացուցիչները գիտակցում են սոցիալական պրոցեսների խիստ առանձնահատուկ հատկանիշը, այսինքն այն հանգամանքը, որ այդ պրոցեսները իրականացվում են մարդկային

անհատների բանականորեն-կամային, նպատակասլաց գործունեության հետևանքով։ Ավելին, պատմության իդեալիստական ըմբռնման հիմնական թերությունը հենց նրանում է, որ նա ջանում է բացատրել հասարակական կյանքը՝ ելնելով նրա արտաքին, առավել ակներև հատկանիշներից։ Հենց այս հատկություններն են, որ պատմա-իդեալիստական մեթոդոլոգիային, ամբողջությամբ վերցրած, ֆենոմենոլոգիական բնույթ են տալիս։

Առհասարակ «ֆենոմենոլոգիզմի» տակ հասկացվում է գիտակցաբար առաջ քաշվող ագնոստիկական սկզբունքը, որի համաձայն մարդկային իմացությունը սահմանափակված է ուսումնասիրվող օբյեկտների «երևույթների» ոլորտով միայն։ Ներկա դեպքում «ֆենոմենոլոգիզմ» հասկացությունը օգտագործվում է այլ իմաստով։ Այն կոչված է արտահայտելու ընդհանրապես պատմա-իդեալիստական մեթոդոլոգիային օբյեկտիվորեն ներհատուկ հատկությունը, որը ստեղծում է ուսումնասիրման միանգամայն որոշակի վերջնասահմաններ (չնայած յուրաքանչյուր կոնկրետ դեպքում եղած փոփոխակումներին ու տատանումներին)։ Այդ վերջնասահմանների պայմաններում ուսումնասիրության օբյեկտները կարող են վերցվել իրենց դրսևորման համեմատաբար արտաքին ձևերով միայն։ Այսպիսով, տվյալ կոնտեքստում «ֆենոմենոլոգիզմը» բնորոշում է ոչ թե սոցիալական երևույթների նկատմամբ մարդկային իմացության սահմանափակությունն առհասարակ, այլ դրանց մեկնարանման և բացատրման որոշակի, այն է՝ իդեալիստական եղանակի իմացական հնարավորությունների սահմանափակությունը։ Իդեալիստական մտածողության այս ֆենոմենոլոգիական հատկությունը բնական է, քանի որ նա սոցիալական կյանքը բացատրելիս ելնում է անմիջականորեն վերջինիս հոդեբանական դրսևորումներից (մարդկանց բանականորեն-կամային գործունեություն, գաղափարական տարբեր գոյացումներ և այլն), այսինքն սոցիալական կյանքի ընդհանուր սիստեմի այնպիսի տարրերից, որոնք ինչպես իրենց ծագմամբ, այնպես էլ բովանդակությամբ վերջին հաշվով ածանցյալ բնույթ ունեն։ Սոցիալական կյանքի միակցությունը կազմող տարրերի փոխգործողության բնույթի մասին սխալ պատկերացումը, երևույթների խաբուսիկ արտաքին տեսքից մեկնող ըմբռնումը՝ ահա իդեալիստական մեթոդոլոգիայի ընդհանուր և հիմնական արատը, որը պայմանավորում է նրա իմացական հնարավորությունների վերը նշված սահմանափակությունը։

Սոցիալական երևույթների իդեալիստական ըմբռնման այս հատկությունները, որոնք կանխորոշում են նրա ներկայացուցիչների անկարողությունը՝ դուրս գալու այդ երևույթների առարկայական յուրօրինակության մակերեսային-էմպիրիկ ըմբռնման ոլորտից, շատ լավ մատնացույց են անում այն ակունքները, որոնցից սկիզբ են առնում բուրժուական հասարակագիտության կարևորագույն արատավոր տենդենցները։

Հիշյալ հատկությունները, նախ, հասկանալի են դարձնում հասարակական գիտության սիստեմների կառուցման երկու սպեկուլյատիվ-դոգմատիկ և միակողմանի-էմպիրիկ եղանակները, որոնք չափազանց բնորոշ են բուրժուական հասարակագիտական մտքի համար։ Այնուհետև, այդ հատկությունների լույսի տակ պարզ է դառնում, թե ինչու մեր դարաշրջանում էլ, որը բնորոշվում է գիտության բուռն առաջընթացով, բուրժուական հասարակագիտության մեջ, անգամ նրա առավել ազդեցիկ կոնցեպցիաներում, շարունակում են գոյություն ունենալ սոցիալ-պատմական կյանքի, նրա փոփոխությունների ու զարգացման

շարժիչ ուժերի բացատրության միանգամայն սնանկ կիսամիջոցներ։ Տվյալ դեպքում մենք ի նկատի ունենք միստիկական, գերբնական ուժերի «օգնությանն» անսքող կերպով դիմելը, ինչպես նաև հասարակական գիտության առարկայի և մեթոդի բացահայտորեն նատուրալիստական մեկնաբանությունը։

* * *

Հասարակական (ինչպես նաև յուրաքանչյուր այլ) գիտության սիստեմի կառուցման վերը նշված սպեկուլյատիվ-դոգմատիկ եղանակի հիմնական, որոշիչ հատկանիշը հանդիսանում է սուբյեկտիվ, ֆանտաստիկ մոմենտի առաջնությունը օբյեկտիվի, փաստականի նկատմամբ, երբ ուսումնասիրվող օբյեկտների իրական կապերը փոխարինվում են մտացածինով։

Դրա հրաշալի բնութագրումը գտնում ենք Էնգելսի մոտ։ Նոր ժամանակի բնափիլիսոփայական սիստեմների քննարկումից անցնելով պատմության սպեկուլյատիվ (մասնավորապես Հեգելյան) փիլիսոփայության վերլուծությանը, նա նշում է. «Բնության փիլիսոփայության նման՝ պատմության, իրավունքի, կրոնի և այլ փիլիսոփայությունն այն էր, որ այն իրական կապակցության տեղը, որը հարկավոր է հայտաբերել իրադարձությունների մեջ, գրավում էր փիլիսոփաների հնարած կապակցությունը»[1]։ Այնուհետև խոսելով հասարակության վերաբերյալ գիտելիքները իսկապես գիտության վերածելու վճռական պայմանի մասին, նա նշում է. «Այստեղ, նշանակում է, հարկավոր էր միանգամայն այնպես, ինչպես և բնության բնագավառում, վերացնել այդ մտացածին հարաբերությունական կապակցությունները, հայտնագործելով իսկական կապակցությունները։ Իսկ այս խնդիրը, վերջիվերջո, հանգում էր շարժման այն ընդհանուր օրենքների հայտնագործման, որոնք իբրև գերիշխող օրենքներ գործում են մարդկային հասարակության պատմության մեջ»[2]։

Բայց հենց այս խնդիրը օբյեկտիվորեն անիրագործելի էր իդեալիստական մեթոդոլոգիայի դիրքերից՝ վերը նշված նրա առանձնահատկությունների պատճառով։ Իմացության այն վերջնասահմանները, որոնք ծառանում են իդեալիստ-ուսումնասիրողի առաջ, ամեն անգամ բնականաբար ստիպում են նրան դիմելու մտացածին կամ էլ գիտության մյուս բնագավառներից մեքենայորեն տեղափոխված կապերին, հենց որ նա ջանում է բացատրել կամ որոշակի միասնության բերել էմպիրիկ նյութը, ինչպես նաև բացահայտել հասարակության զարգացման դինամիկան։ Հետևաբար, զարմանալի չէ, որ հասարակական գիտության սպեկուլյատիվ (պատմության Հեգելյան փիլիսոփայության տիպի) սիստեմները սովորաբար բնորոշվում են հասարակական զարգացման պրովիդենցիալիստական մեկնաբանությամբ կամ նրա ռացիոնալացված ձևով, ինչպիսին է պատմության օբյեկտիվ-իդեալիստական քննարկումը։ Յայտուն արտահայտված սպիրիտուալիզմ, թելեոլոգիզմ, միստիֆիկացիա և օբյեկտիվ պատմական փաստերի ու կապերի խեղաթյուրում՝ դրանք զարգացման կամայականորեն ստեղծված սխեմաների մեջ դնելու ճանապարհով՝ սրանք են պատմության սպեկուլյատիվ փիլիսոփայությանը հատուկ ամենից ավելի բնորոշ գծերը, որոնք և XIX դ. առաջին քառորդում արդեն պայմանավորեցին նրա

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր երկու հատորում, հատ. II, այպետհրատ, 1950, էջ 500։

[2] Նույն տեղում։

վարկաբեկումը և քայքայումը։ Բայց XX դ. բուրժուական պատմագրության մեջ մենք կրկին նկատում ենք պատմա-փիլիսոփայական սպեկուլյատիվ սիստեմների վերածնունդը, ըստ որում, դրանց թվին են պատկանում Արևմուտքում առավել ազդեցիկ կոնցեպցիաները, ինչպիսիք են, մասնավորապես, Օսվալդ Շպենգլերի կամ Առնոլդ Ջ. Թոյնբիի պատմագիտական հայացքների սիստեմները։

Սոցիոլոգիական տեսակետից չափազանց հետաքրքրական այս երևույթը հասկանալու համար անհրաժեշտ է դիմել բուրժուական հասարակագիտությանը բնորոշ մի այլ տենդենցի՝ միակողմանի էմպիրիզմի տենդենցի քննարկմանը, որը նույնպես հանդիսանում է պաամա-իդեալիստական մեթոդոլոգիայի հիմնական արատների և, ամենից առաջ, նրա ֆենոմենոլոգիական բնույթի անմիջական արգասիքը։ Այս տենդենցը առանձնապես ցայտուն արտահայտված և գերիշխող բնույթ է ստանում XX դ. բուրժուական սոցիոլոգիայի և պատմագիտության մեջ։ Նրանց ներկայացուցիչները XIX դ. երկրորդ կեսի պոզիտիվիստական նատուրալիստական մտակառուցումների խորտակումից հետո առհասարակ կանգնում են հասարակական երևույթների բնույթը բացատրելու ընդունակ, ամբողջական գիտական կոնցեպցիա ստեղծելու անհնարինության տեսակետի վրա։ Էմպիրիկ տենդենցը բնորոշ էր պոզիտիվիզմին արդեն նրա սկզբնավորման շրջանից։ Սակայն նրա հիմնադիրները դեռևս չէին անտեսում պատմա-հասարակական գիտության հանգուցային տեսական հարցերը։ Ավելին, վարակված լինելով կապիտալիզմի «խաղաղ» զարգացման դարաշրջանին հատուկ մակերեսորեն-լավատեսական ոգով և որպես օրինակ վերցնելով բնագիտության զարգացումը, նրանք փորձեր էին անում նատուրալիզմի դիրքերից լուծելու սոցիալական գիտությունների առարկայի և մեթոդի կարևորագույն պրոբլեմը։

Այլ պատկեր ենք տեսնում XX դ. բուրժուական պատմա-հասարակական գիտության մեջ, որի շատ ներկայացուցիչներ, համոզվելով, որ անհնար է սոցիալական հարաբերությունները բխեցնել բնության օրենքներից և չտեսնելով ոչ մի այլ հեռանկար, առհասարակ հրաժարվում են տվյալ պրոբլեմատիկան լուծելու որևէ ջանքից և սահմանափակվում փաստերի պարզ նկարագրման, նրանց դասակարգման և սիստեմավորման խնդրով։ Այսպիսով, խոսելով XX դ. բուրժուական հասարակագիտության էմպիրիզմի մասին, մենք ի նկատի չունենք համապատասխան տեսական մտակառուցումները էմպիրիկ բազայի վրա հիմնելու ջանքերը, որ գիտական տեսակետից ինքնին միանգամայն առաջադիմական երևույթ է։ Այդ բառի տակ առավել ևս չի կարող հասկացվել այն աենդենցը, որը միանգամայն բնականաբար և օրինաչափորեն բխում է գիտությունների ավելի ու ավելի մասնագիտացումից և նրանց մեջ աշխատանքի բաժանումից, որոնց պայմաններում ամեն ուսումնասիրող չէ, որ կարող է և պետք է լայն տեսական ընդհանրացումների հանգի։ Տվյալ դեպքում էմպիրիզմ հասկացությունը արտահայտում է հասարակական գիտության սիստեմների կառուցման որոշակի սկզբունքներ, որոնք ծնունդ առան, երբ լիովին խորտակվեցին իդեալիզմի դիրքերից խիստ գիտական, սիստեմատիկ և ամբողջական այնպիսի տեսություն ստեղծելու հույսերը, որն ընդունակ լիներ բացահայտելու սոցիալական երևույթների բնույթը և վերարտադրելու հասարակության գործունեության ու զարգացման հիմնական օրինաչափությունները։ Այդ սկզբունքներն արտահայտվում են այն բանում, որ անուշադրություն են մատնր-

վում ընդհանուր սոցիոլոգիական օրինաչափությունների հայտաբերման հետ կապված սոցիոլոգիական հիմնական պրոբլեմները, միակողմանի ու խիստ մեծ ուշադրություն է դարձվում ուսումնասիրության տեխնիկային՝ ի հաշիվ հասարակության ընդհանուր թեորիայի, հասարակության տարբեր բաղադրամասերը դիտվում են որպես ինքնուրույն, միմյանցից մեկուսացած մարզեր, և մի շարք այլ հարցերում։ Այս իմաստով ըմբռնված էմպիրիզմը հանդես է գալիս այս կամ այն չափով որպես առավել բնորոշ հատկանիշ, որը միավորում է նորագույն շրջանի բուրժուական այնպիսի ազդեցիկ կոնցեպցիաներ, ինչպիսիք են Զիմելի, Մ. Վեբերի, Դյուրկհայմի, Էլվուդի, Ֆոն-Վիզեի, Լունդբերգի, Պարսոնսի և այլոց սոցիոլոգիական և պատմական կոնցեպցիաները։

Մինչդեռ էմպիրիզմը, որն ինքնին բնականորեն տանում է դեպի ուսումնասիրության հեռանկարի խիստ նեղացում, իր, որպես կանոն բացահայտորեն արտահայտված, սուբյեկտիվիզմով և սոցիալ-պատմական օրինաչափության ժխտումով ոչ մի կերպ չէր կարող բավարարել բուրժուական հասարակագիտության պահանջները։ XX դ. նոր, փոփոխված պատմական պայմաններում, որոնք բնորոշվում էին սոցիալական կյանքի չափազանց բուռն զարկերակով, նրա զարգացման պրոցեսների ծայրահեղ դինամիկությամբ, ոտքի տակից հողը ավելի ու ավելի կորցնող բուրժուազիայի ներկայացուցիչները առանձնապես հրամայաբար էին զգում ընդհանրացնող, կոնստրուկտիվ այնպիսի կոնցեպցիաների պահանջը, որոնք կարողանային մարդկության համաշխարհային պատմության ֆոնի վրա ինչ-որ կերպ բացատրել ներկան, նրա առաջատար տենդենցները։

Այս ամենը չէր կարող չնպաստել պատմության սպեկուլյատիվ փիլիսոփայության վերածնմանը Արևմուտքի նորագույն պատմագրության մեջ, թեև XX դ. կեսերին այն կատաղի հարձակումների էր ենթարկվել հենց իրենց՝ բուրժուական պատմաբանների ու սոցիոլոգների (պոզիտիվիստների) կողմից որպես միանգամայն մնանկ և պատմա-հասարակական գիտության նոր մակարդակին չհամապատասխանող մեթոդ։ Սակայն այն, ինչ վերջնականապես անցյալ էտապ էր թվում, XX դ. իդեալիստական մտածողության համար, որքան էլ այդ պարադոքսալ թվա, լայն պատմական հեռանկար ստեղծելու միակ ճանապարհը դուրս եկավ։ Պատմության կառուցման սպեկուլյատիվ մեթոդը, իր ողջ դոգմատիկությամբ ու մետաֆիզիկությամբ, դրա միակ միջոցը հանդիսացավ Արևմուտքի պատմագրության ներկայացուցիչների համար, որոնք ցանկանում էին դուրս գալ սողացող էմպիրիզմի սահմաններից։

XX դ. պատմության սպեկուլյատիվ փիլիսոփայության (որը որոշ չափով ռեակցիա էր ընդդեմ ժամանակակից բուրժուական հասարակագիտության մեջ իշխող միակողմանի էմպիրիկ տենդենցի) ամենավառ արտահայտությունների թվին են պատկանում վերը հիշված Շպենգլերի, Թոյնբիի հայացքների սիստեմները։

Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ ժամանակակից բուրժուական պատմագրության մեջ պատմության սպեկուլյատիվ փիլիսոփայության վերածնման մասին խոսել կարելի է այդ բառի ոչ լրիվ իմաստով։ Թեև պատմության սպեկուլյատիվ փիլիսոփայության հիմնական արատները ամբողջովին վերաբերում են նաև Շպենգլերի, Թոյնբիի պատմա-փիլիսոփայական սիստեմներին, վերջիններս, այնուհանդերձ, շատ տեսակետներից հանդիսացան XIX դ. համանման (ըստ մեթոդի ընդհանրության) սիստեմների (Հեգել, Կուզեն, Միշ-

լե) ուղղակի հակոտնյան։ Դա վերաբերում է, ամենից առաջ, ժամանակի և տարածության մեջ հասարակական-պատմական գոյացությունների հարաբերակցության ընդհանուր պրոբլեմի տրամագծորեն հակադիր քննարկմանը։

Եթե անցյալ դարի առավել ազդեցիկ և ընդհանրացնող ուսումնասիրությունները համաշխարհային պատմությունը մեկնաբանում էին որպես մարդկության զարգացման առաջընթաց և միասնական պրոցես ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ, ապա XX դ. միանգամայն այլ պատկեր ենք տեսնում։ Ժամանակակից բուրժուական սոցիալ-տնտեսական գիտության առավել բնորոշ գծերից մեկը հանդիսանում է պատմական պրոցեսի մեկուսացման և անհատականացման ցայտունորեն արտահայտված տենդենցը, պատմական պրոցեսը որպես տարածության մեջ գոյակցող և ժամանակի մեջ փոփոխվող, խորապես ուրույն կուլտուրաներ, քաղաքակրթություններ դիտելու փորձը։ Ըստ որում (դա, մասնավորապես, Շպենգլերի և Թոյնբիի կոնցեպցիաների կարևորագույն թեզիսն է) վերջինները հաճախ հայտարարվում են կատարելապես «զուգահեռ» և «համարժեք» անկախ համաշխարհային պատմության մեջ նրանց ունեցած կոնկրետ տեղից։ Մեկուսացված քաղաքակրթության, կուլտուրայի[1] հենց տվյալ հասկացությունն է դառնում XX դ. բուրժուական պատմա-փիլիսոփայական առաջատար կոնցեպցիաների հիմնական տեսական կատեգորիան, բնորոշելով նրանց կառուցման ողջ սիստեմը։

Ժամանակակից ամերիկյան հեղինակ Վ. Հաասը, բնութագրելով այդ տենդենցները, իր հոդվածում[2] միանգամայն իրավացիորեն նշել է. «Պատմության նկատմամբ նախկին ուղղահայաց տեսակետը փոխարինվեց այլ՝ հորիզոնական տեսակետով, որը, ժխտելով էվոլյուցիան և ժամանակից վերանալով, քաղաքակրթությունները դիտում է վերևից ներքև, հետաքրքրվելով նրանց նմանության և տարբերության գծերով»։

Ուրեմն ինչո՞վ բացատրել այսպիսի շեշտակի շրջադարձը սոցիալ-պատմական պրոցեսի նկատմամբ եղած հայացքների մեջ, գոնե այն ասպարեզում, որն ամենից ավելի լրիվ և հետևողականորեն է արտացոլում նրա ընդհանուր տեսական տոնուսը, այսինքն՝ պատմության փիլիսոփայության մեջ։ Նախ և առաջ, Շպենգլերի, Շուբարտի, Կրոեբերգի, Թոյնբիի, Շվետցերի, Սորոկինի, Նորտրոպի և նորագույն շրջանի այլ ազդեցիկ բուրժուական հեղինակների հայացքների սիստեմները չեն կարող բացատրվել և հասկացվել այն ընդհանուր սոցիալ-հոգեբանական վիճակից դուրս, որով բնորոշվում է XX դ. կապիտալիստական Արևմուտքը։ Նրանց պատմա-փիլիսոփայական ուսումնասիրությունների ինչպես մեթոդները, այնպես էլ արդյունքները կանխորոշված էին անցյալում բուրժուազիային հատուկ մակերեսային լավատեսության փոխարինումով՝ խոր սկեպսիսի և հոռետեսության հոդերանությամբ, որը տեղի ունեցավ կապիտալիստական սիստեմի՝ իր ընդհանուր ճգնաժամի ժամանակաշրջանը թևակոխելու հետևանքով։ Սոցիալ-հոգեբանական տվյալ պրոցեսները, որոնք կյանքի էին կոչված և պայմանավորված իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալիստական հասարակության աստիճանական անկումով ու

---

[1] Այդ իմաստով տվյալ հասկացողությունները սովորաբար օգտագործվում են որպես համանիշներ։

[2] Տե՛ս W. S. Haas, The March of Philosophy of History and Its Crucial Problems To-day, „The Philosophical Review", Ithaca, 1949, vol. 58. № 2.

քայքայումով, իրենց մռայլ երանգով գունավորեցին ժամանակակից բուրժուազիայի գաղափարական աշխարհազգացողությունը, դրանով իսկ՝ նրա հոգևոր կուլտուրայի բոլոր արտահայտությունները։ Իսկ ինչ վերաբերում է այն ընդհանուր, անմիջական ճանաչողական միջոցներին, որոնց դիմեց այդ կոնցեպցիան՝ մարդկության պատմության առաջընթաց զարգացումը, նրա միասնությունը ժխտող սիստեմ մշակելիս, ապա դրանք ըմբռնելու համար դարձյալ պետք է ելակետ ծառայեն իդեալիստական մեթոդոլոգիայի ընդհանուր առանձնահատկությունները։

Ինչպես արդեն գիտենք, պատմա-իդեալիստական մտածողության առավել ընդհանուր և հիմնական առանձնահատկություններից մեկը նրա ֆենոմենոլոգիզմն է, որի պայմաններում ուսումնասիրվող առարկաները կարող են վերցվել իրենց արտահայտման արտաքին ձևերով միայն։ Իդեալիստական աշխարհայեցողության հենց այս առանձնահատկությամբ է որոշվում բուրժուական պատմագրությանը շատ բնորոշ տենդենցը՝ ֆորմալիզացիայի ենթարկել պատմական իրականությունը, նրա պրոցեսներն ու հարաբերությունները։

Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ պատմական ֆորմալիզմի կոնկրետ արտահայտությունները տարբեր են լինում։ Պատմական ճանաչողության պրոցեսում իրականության ֆորմալիզացիան տեղի է ունենում, սովորաբար, երկու հիմնական ուղղությամբ՝ որպես ընդհանրացում կամ էլ անհատականացում։ Այն կարող է արտահայտվել, մի կողմից, համապատասխան պատմական երևույթների, պրոցեսների և հարաբերությունների ձևական նույնացմամբ, իսկ մյուս կողմից՝ նույնքան ձևական հակադրմամբ. երկու դեպքում էլ հիմք է ծառայում նրանց սոսկ արտաքին կամ կատարվող ուսումնասիրության տեսակետից ամենևին էլ ոչ էական հատկանիշների առանձնացումը։

Առաջին դեպքում տեղի է ունենում քննարկվող օբյեկտների կրկնվող գծերի բացարձակացում, որը, այսպես թե այնպես, տանում է դեպի նրանց ուրույնության անտեսումը։ Երկրորդ դեպքում, ընդհակառակը, ճանաչողությունն պրոցեսն ընթանում է պատմության անհատական, չկրկնվող կողմերի միակողմանի ցցունացման ուղիով։ Արդյունքը լինում է այն, որ տեսադաշտից, բնականաբար, դուրս են մնում ուսումնասիրության մեջ համադրվող օբյեկտների գոյության և զարգացման շատ էական ընդհանուր օրինաչափություններ։

Այս երկու հունների հաշվառումը չափազանց կարևոր է հասկանալու համար ուսումնասիրության այն տրամաբանությունը, որով բուրժուական նորագույն սոցիոլոգիայի շատ ներկայացուցիչներ ռեակցիոն և սնանկ եզրակացությունների են հանգում սոցիալ-պատմական պրոցեսի բնույթի մասին։ Այսպես, հասարակական զարգացման անցած էտապները (հատկապես հին աշխարհի պատմությունը) արդիականացնելու տենդենցը, որը շատ տարածված է բուրժուական պատմագիտության մեջ, հիմնվում է տարբեր դարաշրջանների պրոցեսներն ու հարաբերությունները ըստ նրանց արտաքին, առավել ընդհանուր հատկանիշների նույնացնելու մեթոդի վրա, որը տանում է դեպի այդ դարաշրջաններից յուրաքանչյուրի ներքին ուրույնության անտեսումը։

Տվյալ հակապատմական տենդենցը, որը հաճախ հասցնում է հասարակական շրջապտույտի կոնցեպցիայի վերածնմանը, շատ ցցուն կերպով երևան է գալիս հին պատմության այնպիսի հայտնի բուրժուական մասնագետների ուսումնասիրություններում, ինչպիսիք են Էդ. Մայերը, Ռ. Պելմանը, Մ. Ռոստովցևը։ Այս կապակցությամբ առանձնապես հետաքրքրական է Էդ. Մայերի

օրինակը, քանի որ նրա հայացքների սիստեմը ակնառու կերպով ցուցադրում է, թե իդեալիստական մեթոդոլոգիայի ազդեցության տակ, սոցիալական նոր պայմաններում, բուրժուական շատ գիտնականներ ինչպե՞ս ընդունեցին վերջին հարյուրամյակում պատմագիտության ունեցած նվաճումները, մասնավորապես XIX դ. երկրորդ կեսի հնագիտական մեծ հայտնագործությունները։ Էգելյան քաղաքակրթության հայտնագործումը ընկալելով միանգամայն սխալ, այն է՝ որպես համաշխարհային-պատմական զարգացման գաղափարի սնանկություն վկայող փաստ, էդ. Մայերը, ինչպես հայտնի է, ջանում էր ապացուցել մի կողմից անտիկ հասարակության, մյուս կողմից՝ ֆեոդալական միջնադարի և նոր շրջանի սոցիալ-պատմական պրոցեսների էական գծերի բացարձակ նույնությունը («զուգահեռությունը»)։

Այնուհետև, իդեալիստական մեթոդոլոգիայի նշված հատկությունների լույսի տակ հասկանալի են դառնում ճանաչողական նաև այն միջոցները, որոնց օգտագործմամբ բուրժուական շատ հետազոտողներ (Շպենգլեր, Թոյնբի, Նորտրոպ և այլն) հանդում են տարբեր կոնկրետ կուլտուրաների հակադրմանը, իսկ դրա հետևանքով՝ բացարձակ պատմական ռելյատիվիզմի կոնցեպցիային։ Տվյալ տիպի պատմական մտակառույցումների առավել բնորոշ գիծը հանդիսանում է մարդկության կոնկրետ կուլտուր-պատմական սիստեմների ուրույն, ինդիվիդուալ-անկրկնելի գծերի բացարձակացումը, որը հանգեցնում է նրանց ներքին բովանդակության միանգամայն անօրինաչափ, ծայրահեղ հակադրմանը[1]։ Մեկուսացած կուլտուր-պատմական պրոցեսների ինքնատիպության հենց այս միակողմանի ցցունացմամբ է ձեռք բերվում նրանց խստորեն արտահայտված անհատականացումը, սա էլ իր հերթին պայմանավորում է նրանց բացարձակ ռելյատիվիստական մեկնաբանությունը, որն իր խտացրած արտահայտությունն է գտել Շպենգլեր-Թոյնբիի «լոկալ» կուլտուրաների, քաղաքակրթությունների «համարժեքության», «զուգահեռության» հայտնի հիմունքում։

Նորագույն շրջանի այս և բուրժուական մյուս հեղինակների հիմնական եզրակացությունները բացահայտորեն սնանկ են, թեև նրանք ջանք են թափում գործը ներկայացնելու այնպես, թե իբր իրենց տեսական կառուցվածքները լիովին համապատասխանում են ժամանակակից պատմագիտության տվյալներին։ Այստեղից՝ այդ կոնցեպցիաների արտաքուստ էմպիրիկ բնույթը, առաջին հայացքից խիստ փաստահարուստ լինելը, որ, սակայն, խարուսիկ է։

Չնայած պատմական պրոցեսների զարգացման ողջ բազմապլանայնությանը, ինքնատիպությանը, հակասականությանն ու անհամաչափությանը, այսինքն այն ռեալ հիմունքներին, որոնց ուռճացման ու բացարձակացման միջոցով են այս հեղինակները հանգել իրենց կոնցեպցիաներին, նրանց կարևորագույն եզրակացությունները ուղղակի հակադրության մեջ են գտնվում այն փաստերի հետ, որ ձեռք է բերել ժամանակակից սոցիալ-պատմական գիտությունը։ Դրանում համոզվելու համար անհրաժեշտ է լոկ այդ փաստերի ավելի խոր, գիտական մեկնաբանում, որը, սակայն, հնարավոր է իմացական այն վերջնասահմանների հաղթահարման միջոցով, որ օրգանապես իր մեջ է կրում իդեալիստական մտածողությունը։

---

[1] Մասնավորապես այս եզանակով է կատարվում «Արևելքի» և «Արևմուտքի» հակադրումը, որն այնքան տարածված է բուրժուական սոցիալ-պատմական գիտության մեջ։

* * *

Վերն արդեն նշվեց, որ պատմա-իդեալիստական մեթոդոլոգիայի ընդհանուր և հիմնական արատը, որը պայմանավորում է նրա իմացական նեղ հնարավորությունները, եղել է և մնում է սոցիալական կյանքի կոմպլեքսը կազմող տարրերի գործողության բնույթի սխալ, խաբուսիկ արտաքին տեսքից բխող ըմբռնումը։ Մարքսիզմի հիմնադիրների մեծագույն գիտական ծառայությունն ամենից առաջ այն է, որ նրանք առաջինը կարողացան հայացքների ամբողջական ու կուռ սիստեմով հաղթահարել հասարակության և նրա պատմության այդ մակերեսային-էմպիրիկ, իդեալիստական ըմբռնումը և դրա փոխարեն հաստատել այն ռեսակետը, որը վերարտադրում է հասարակական ամբողջության տարբեր բաղադրատարրերի միջև իսկապես գոյություն ունեցող փոխադարձ կապակցությունները։ Դա կատարյալ հեղաշրջում էր հասարակության վերաբերյալ հայացքների մեջ։

Հաղթահարելով մարդկային հասարակության առարկայական ինքնատիպության՝ իդեալիզմին հատուկ մակերեսային-էմպիրիկ ըմբռնումը, Մարքսն ու Էնգելսը կարողացան նրա որոշիչ բովանդակությունը տեսնել հասարակական արտադրության ոլորտում և այդ ձևով բացատրել սոցիալական երևույթների ներքին առանձնահատկությունները, նրանց ծագումն ու հետագա զարգացումը։ Պատմության մատերիալիստական ըմբռնման հայտնագործումը, հնարավորություն տալով թափանցելու որոշիչ սոցիալական հարաբերությունների մեջ և դրանով իսկ հասարակությունը բացատրելու իր իսկ ներքին էությամբ, թույլ տվեց հասարակագիտությունը ազատել միստիկական և նատուրալիստական տարրերից։ Այլ կերպ ասած, պատմության մատերիալիստական ըմբռնումը հանդես եկավ որպես մի տեսական հիմք, որի վրա հետևողականորեն և իր ուսումնասիրության առարկայի առանձնահատկություններին խիստ համապատասխան կարող էր կառուցվել հասարակական գիտությունը։

Պատմա-մատերիալիստական մեթոդոլոգիան թույլ տվեց որակապես նոր ձևով դիտել մարդկության ընդհանուր պատմությունը և, համապատասխանաբար, այլ կերպ մոտենալ նրա տարբեր հունների զարգացման մեջ եղած ընդհանուր և տարբերիչ գծերի հարաբերակցության պրոբլեմի լուծմանը։

Երբ հասարակական արտադրության սիստեմի մեջ հայտնաբերվեցին սոցիալ-պատմական գոյացությունների բուն առկայությունը, նրանց գործունեությունն ու զարգացումը որոշող ռեալ հիմքերը, բոլոր նախադրյալները ստեղծվեցին՝ վերջնականապես հաղթահարելու համար պատմա-իդեալիստական մտածողության ֆենոմենոլոգիզմը և դրանով իսկ՝ այն արատավոր տենդենցները, որոնք տանում են դեպի համապատասխան պատմական պրոցեսների նույնացում կամ հակադրում (նրանց լոկ արտաքին և ֆորմալ հարաբերություններն ու հատկանիշները առանձնացնելու միջոցով)։

Մարդկության պատմության ուսումնասիրման էականորեն նոր մեթոդոլոգիական սկզբունքները, որ առաջ են քաշվել պատմական մատերիալիզմի հիմնադիրների կողմից, իրենց խտացրած արտահայտությունը գտան հասարակական-տնտեսական ֆորմացիաների մասին մարքս-լենինյան ուսմունքի մեջ։

Ժամանակակից բուրժուական տեսաբանները հաճախ աշխատում են ներշնչել իրենց ընթերցողներին, թե մարդկային ուրույն կուլտուրաների (որոնց նշանակությունը արժանի գնահատական ստացավ միայն XX դ.) բազմաթիվ-

թյունը հերքում է տվյալ ուսմունքը, քանի որ նրանց առկայությունը ոչ մի հնարավորություն չի տալիս խոսելու հասարակական հարաբերությունների և կուլտուրայի միասնական տիպերի մասին։

Նման հայտարարություններ կարող են անել այն անձինք, որոնք գիտակցաբար խեղաթյուրում են հասարակական զարգացման պատմա-մատերիալիստական թեորիան, կամ էլ սխալ են ըմբռնում այն։ Վերջին դեպքում այն իր տեսական բովանդակությամբ հավանաբար նույնացվում է XIX դ. վուլգար պոզիտիվիստական մակաուուցումների հետ, որոնց հեղինակները ջանում էին մարդկային քաղաքակրթության միասնության գաղափարը հիմնավորել սոսկ տեղական պատմական նշանակություն ունեցող այս կամ այն հատկանիշը զարգացման համաշխարհային-պատմական սկզբունքների ու օրենքների աստիճանին բարձրացնելու միջոցով։

Իրականում քաղաքակրթությունների բազմաթիվությունը բոլորովին էլ չի բացառում մարդկային կուլտուրայի ընդհանրության գաղափարը։ Հենց այդ է վկայում ինչպես պատմության անցյալ էջերի, այնպես էլ ժամանակակից դարաշրջանի պրոցեսների ու փաստերի խոր մատերիալիստական ուսումնասիրությունը։ Նման փոխադարձ բացառում կարող է տեղի ունենալ միայն ֆենոմենոլոգիական, պատմա-իդեալիստական մտածողության շրջանակներում, որը սահում է երևույթների մակերեսով և այդ պատճառով սովորաբար ընդունակ չէ թափանցելու սոցիալական իրականության այնպիսի պրոցեսների մեջ, որոնք հնարավորություն են տալիս հասկանալու նրա ուսումնասիրած օբյեկտների՝ իրենց էական գծերով ընդհանուր հիմունքները։

О ФЕНОМЕНОЛОГИЧЕСКОЙ ПРИРОДЕ ИСТОРИКО-ИДЕАЛИСТИЧЕСКОЙ МЕТОДОЛОГИИ

Э. С. МАРКАРЯН

(Резюме)

В статье характеризуется феноменологическая природа историко-идеалистической методологии. Вместе с тем в ней делается попытка установить непосредственную связь между этим фундаментальным свойством историко-идеалистического мышления и основными порочными тенденциями буржуазного обществоведения.

В данном случае понятие «феноменологизм» призвано выразить присущее историко-идеалистической методологии качество, создающее вполне определенные (несмотря на различные в каждом конкретном случае вариации и колебания) лимиты исследования. При этих лимитах объекты изучения способны браться лишь в своих относительно внешних формах и проявлениях. Таким образом, в настоящем контексте понятие «феноменологизм» характеризует ограниченность познавательных возможностей идеалистического способа трактовки и объяснения социально-исторических явлений. Это феноменологическое свойство историко-идеалистического мышления естественным образом проистекает из попыток объяснить социальную жизнь, исходя непосредственно из ее психических прояв-

лений (разумно-волевой деятельности людей, различных идеологических образований и т. д.), т. е. таких элементов ее общей системы, которые как в своем генезисе, так и содержании имеют, в конечном итоге, **производный характер**. Ложное, исходящее из иллюзорной видимости явлений, понимание характера взаимодействия элементов, образующих комплекс социальной жизни,— таков общий и фундаментальный порок идеалистической методологии, обусловливающий отмеченную ограниченность ее познавательных возможностей.

Эти свойства идеалистического понимания социальных явлений, предопределяя собой неспособность ее представителей выйти за сферу поверхностно-эмпирического осознания их (явлений) предметности, как нельзя лучше указывают на те истоки, откуда берут свое начало главнейшие порочные тенденции буржуазного обществоведения. Прежде всего они могут служить предпосылкой для понимания двух весьма характерных для него способов построения систем общественного знания: спекулятивно-догматического и односторонне-эмпирического.

Далее, в свете данных свойств становится понятным, почему и в нашу эпоху, характеризуемую бурным прогрессом научного знания, в буржуазном обществоведении продолжают воспроизводиться совершенно несостоятельные и паллиативные средства объяснения социально-исторической жизни, движущих сил ее изменений и развития. Мы имеем в виду в данном случае прямое обращение к мистике, к «помощи» сверхъестественных сил, а также откровенную натуралистическую трактовку предмета и метода общественного знания.

Кроме того, именно феноменологической природой историко-идеалистического мышления определяется весьма характерная для буржуазной историографии тенденция к формализации исторической действительности, ее процессов и отношений. В связи с этим в статье рассматриваются основные русла, по которым в процессе исторического познания осуществляется формализация действительности. В заключение указывается, что лишь в результате открытия Марксом и Энгельсом материалистического понимания истории были созданы необходимые теоретические предпосылки для преодоления феноменологической трактовки общества и объяснения в строго научных понятиях внутренней, специфической природы социальных явлений, их генезиса и дальнейшего развития. Данное открытие выступило в качестве теоретического фундамента, на котором последовательно и в строгом соответствии со своим предметом исследования могло строиться общественное знание.